Ա. ՏԱՐԻ
Թիւ 25
1927
ԴԵԿՏ. 17
Հատը 5 ղրուշ.

# ՄԵՂՈՒ

ԾԱՆՈՒՑՈՒՄ
Տողը 10 ղրշ.
Զեպուած գրութիւնք չեն վերադարձուիր։
Հատը 5 ղրշ

ՄԵՂՈՒ, 26րդ թիւէն սկսեալ, պիտի հրատարակուի 8 էջի տեղ 10 էջ, նոր եւ խնամեալ բովանդակութեամբ, առանց գնոյ յաւելման: Կանխիկ վճարող բաժանորդ պիտի ստանան նաեւ տիեզերահռչակ Թոլսթոյի **ՈԳԵՀԱՐՑՈՒԹԻՒՆ** նշանաւոր գործին հայերէն թարգմանութեան պրակները, բոլորովին ձրի:

Այս կերպով **ՄԵՂՈՒ** 8 էջի տեղ 12 էջ տուած կ՚ըլլայ 26րդ թիւէն սկսեալ:

**ՄԵՂՈՒ**ի խմբագրութիւնն այս զոհողութիւնը յանձն կ՚առնէ, յուսալով համապատասխան քաջալերութիւնը գտնել ընթերցասէր ազգայիններէ:

**ՄԵՂՈՒ**ի բաժանորդագրութիւնը թիւի վրայ է: 10 թիւ 50 ղրշ., 20 թիւ 100 ղրշ., եւլն: Տարեկան (52 թիւ) 250 ղրշ., 3 տոլար, 60 ֆրանք:

## ԹՈԼՍԹՈՅԻ ՈԳԵՀԱՐՑՈՒԹԻՒՆԸ

Լոյս պիտի ընծայուի Փալագաշեան տպարանէն, ընտիր թուղթի վրայ եւ մաքուր տպագրութեամբ:

Բացուած է բաժանորդագրութիւն: Կանխիկ բաժնեգինն է 25 ղրշ., 25 սէնթ, 5 ֆրանք:

**ՄԵՂՈՒ**ի կանխիկ վճարող բաժանորդները **ՁՐԻ** պիտի ստանան **ՈԳԵՀԱՐՑՈՒԹԵԱՆ** պրակները:

Նոյնպէս Ոգեհարցութեան բաժանորդագրուողները՝ հետզհետէ տպագրուելիք պրակներուն հետ **ՁՐԻ** պիտի ստանան **ՄԵՂՈՒ**ի թիւերը, ո՛րչափ ատեն որ տեւէ Ոգեհարցութեան տպագրութիւնը:

Ոգեհարցութեան պրակները ձեռքէ չեն ծախուիր, միայն բաժանորդներու կը ղրկուին:

Փութացէ՛ք բաժանորդագրուիլ Թոլսթոյի **ՈԳԵՀԱՐՑՈՒԹԵԱՆ**. որովհետեւ բաժանորդներու թիւէն քիչ աւելի թիւով պիտի տպագրուի եւ տպագրութիւնը աւարտելէ յետոյ՝ բաժանորդներէն աւելցած օրինակները կրկին գինով պիտի ծախուին:

## ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆ
### ԵՒ ԻՐ ՀԻՄՆԱԴԻՐԸ

*Աշխարհի բոլոր վարդապետութիւնները, բոլոր վարչաձեւերը, որ բնութեան անյեղլի օրինաց հակառակ են, չեն կարող վարել մարդկութիւնը:*

*Մարդկային բոլոր թշուառութիւնք, առանց բացառութեան՝ հակաբնութենական սխալ վարդապետութեանց, եւ հետեւաբար ասկէ յառաջ եկած սխալ վարչութեանց արդիւնքն են:*

*Մովսէսէն սկսեալ մինչեւ Քրիստոս, բոլոր կրօնական վարդապետութիւնք, եւ անոնց հետեւութեամբ դրուած բոլոր օրէնքներն եւ առնցմէ բղխած բոլոր վարչութիւնները չկրցին մարդս գոհացնել եւ երջանկացնել:*

*Մարդ ի բնէ ազատ ստեղծուած ըլլալով, միշտ անհանգիստ էր բռնաւոր օրէնքներու ճնշման ներքեւ. յետոյ դասակարգային բաժանումները, որ չգիտցուիր թէ ի՛նչպէս ստեղծուած էին, վիճակը շատ կը տանջէին. մանաւանդ օրէնքին գործադրութիւնները, այս դասակարգային բաժանմանց վրայ իրենց ունեցած անհաւասարութիւններով բացարձակապէս զգլխեցուցիչ էին:*

*Մարդկանց մէջ կար դասակարգ մը որոնք իրր անասուն կը գործածուէին, եւ ասոնք բնաւ չէին կարող որ եւ իցէ մէկուն, կամ որ եւ իցէ իշխանութեան բողոքել իրենց կրած անասնելի տանջանքներուն համար, որովհետեւ օրէնքը թոյլատրած էր այդ բանը: Նաեւ այս խեղճերը չէին կրնար իրենց տէրերը թողուլ եւ այլուր փախչիլ, վասնզի կը հետապնդուէին, եւ երբ բռնուէին, իրենց պատիժը մահ էր կամ մշտնջենական տանջանք: Ասոնք երբեմն անձնասպան կ՚ըլլային, չդիմանալով իրենց բանադատուած ծանրածանր աշխատութեանց:*

*Գործաւոր, արհեստաւոր դասակարգերն ալ նախանձելի վիճակ մը չունէին. անոնք ալ գրկանքներու ենթարկուած էին, եւ օրէնքը անոնց հանդէպ ալ անիրաւ ու անարդար էր: Կար հարուստներու դասակարգը՝ որոնց հանդէպ օրէնքը մասնաւոր թոյլատրութիւններ ունէր: Կար նաեւ իշխանաւորաց դասակարգն որոնք բոլորովին առանձնաշնորհեալ վիճակ մը ունէին, եւ օրէնքը անոնց համար ոչինչ կ՚արժէր: Ասոնք յաճախ իրենց քմահաճոյքին համաձայն ամէն բան կ՚ընէին, նոյն իսկ չարիք, առանց որ եւ է վախ կամ ամօթանք ունենալու: Վերջապէս կար կրօնաւորաց դասակարգը, որոնք նոյնպէս իրենց կարգին ժողովուրդը կը կեղեքէին եւ կը շահագործէին: Ասոնք առանց աշխատելու տզրուկի նման կը քամէին հասարակութիւնը, նաեւ իրենց այլանդակ վարդապետութիւններովը հասարակութեան զարգացման եւ յառաջդիմութեանը արգելք կ՚ըլլային: Բնաւ չէին ուզեր որ ժողովուրդը լուսաւորուի, որովհետեւ գիտէին որ այն ատեն իրենց հանգիստը պիտի խանգարուի եւ իրենք պիտի զրկուին դրամական խոշոր հասոյթներէն:*

*Մարդկութիւնը ահա՛ այս վիճակն ունէր, երբ Քրիստոս աշխարհ եկաւ:*

*Պատմութիւնը գրեթէ ոչինչ կը յայտնէ մեզ Անոր կեանքին առաջին մասին վրայ: Ինչպէ՞ս մեծցաւ, ո՞ւր ուսաւ, ո՞րմէ ուսաւ, որոնք եղան իր առաջնորդները: Ինք Հրեայ էր. հրէական օրինաց համաձայն թլփատուեցաւ. բայց յետոյ իր երեսուն տարեկան հասակին մէջ Ջուրով մկրտուիլը ցոյց կու տայ թէ՝ այն ժամանակները նոր վարդապետութիւն մը, նոր կրօնք մը եկած էր, քանի որ անկէ առաջ երախա երբ ջրով մկրտելու սովորութիւն մը կամ այնպէս պատուիրող կրօնք մը չկար:*

*Յիսուս երբ իր վարդապետութիւնները սկսաւ, արդէն շատ խորունկ կերպով ուսած էր երկրիս այն ժամանակուան օրէնքները, անոնց պակասութիւնները տեսած եւ ուսումնասիրած էր, մարդկութեան վիճակը եւ անոնց կրած տառապանքներուն պատճառները քննած եւ վերլուծած էր, ատոր համար իր վարդապետութիւնները ուժով եւ հրամայական էին, անթերի եւ արդար, ահա՛ թէ ի՞նչու անքննադատելի եւ ազդեցիկ եղան անոնք, եւ իրենց կատարելութեանցը համար* կրօնք *մը մարդկութեան, եւ մարդկային լեգէոններ կապեցին իրենց:*

*Յիսուսի վարդապետութիւններն ա՛յնչափ պարզ, ա՛յնչափ մեկին, ժողովրդական, ա՛յնչափ բնական, եւ ա՛նչափ արդար էին որ, մարդիկ Աստուածային անուանեցին զանոնք, եւ հեղինակն ալ* Աստուածորդի*:*

Անոր վարդապետութիւնները միայն սիրոյ վրայ հիմնուած էին. սէր իրարու հանդէպ, առանց ազգի, կրօնի, և աստիճանի խտրութեան, թշնամիին հանդէպ ալ սէր, ծառային հանդէպ ալ սէր: Երկրորդ՝ հաւասարութիւն. աստիճանական, դասակարգային խտրութեանց բարձումը: Երրորդ ազատութիւն խօսելու, գրելու և գործելու:

Մարդիկ շատ հաճելի գտան այս վարդապետութիւնները, որոնք իրենց համար մէկ մէկ նոր աւետիսներ էին, և այս պատճառաւ ալ Յիսուսի վարդապետութեանց հաւաքածոն կոչեցին Աւետարան, որուն բիւրաւորներ հետեւեցան շատ քիչ ժամանակուան մէջ:

Յիսուս իր այս վարդապետութիւններով առաջին անգամ ընկերվարութեան հիմը դրած եղաւ մարդկութեան մէջ:

Յիսուսի քարոզած ընկերվարութիւնը բնութեան հակառակ բան մը չունէր իր մէջ: Իր բոլոր վարդապետութիւններն բնութենէն առնուած ուղղութիւններ էին, բնութեան գլխաւոր ձեռակերտին՝ մարդուն երջանկութեանը համար:

Սակայն զեղծումը, որ մարդկութեան չար ոգին է, դժբախտաբար Անոր հետեւողներուն մէջ ալ մտաւ:

Շահամոլներ օգտուելով առիթէն, նոր նոր վարդապետութիւններ հնարեցին և սկսան շահագործել հարազատութիւնը. մանաւանդ ասոնց մէկ մ' որ բոլորովին հեռանալով Յիսուսի քարոզած սուրբ և բնական ընկերվարութենէն, վերջին աստիճան անբնական և անիրականալի ազատութիւն մը քարոզեցին. այսինքն՝ անիշխանութիւն. ասոնք իրենց նպատակին հասնելու համար ոճրագործութիւնը ընդունեցին և այս միջոցաւ ուզեցին աշխարհիս բոլոր իշխանութիւնները ջնջել, օրէնքները հիմնայատակ կործանել և քանդել:

Ասոնք բնական սրբութիւնները հեղնեցին, ընտանեաց մէջ բաժանումներ յառաջ բերին, գործաւորաց հանգիստը խանգարեցին, և ազատութեան անուան տակ՝ բռնութիւններ, շահատակութիւններ, և կողոպուտներ գործելով, ընկերվարութիւնը բերին հասցուցին անանկ վիճակի մը որ, ան դարձաւ եղաւ մեծ պատուհաս մը մարդկութեան գլխուն:

Վերջապէս ասոնք Թշուառին միակ մխիթարանքը եղող Աստուածային հաւատքն ալ վերջացուցին աշխարհէս, և մարդկութեան սրտերը դատարկացուցին ու չորցուցին: Այժմ Թշուառը աղօթքի տեղ ունի հայհոյութիւն, աղերսի տեղ՝ թշնամանք, և արցունքի տեղ լորձունք, և բոլորովին անմխիթար է: Կը տեսնենք որ հիմա մարդկութիւնը աւելի թշուառ է բաղդատմամբ առջի վիճակին. ան դժգոհ է ամէն բանէ. անոր համար այժմ չկայ բան մը որ զինքը գոհացնէ. ինքն ալ որոշ չգիտեր ի՞նչ ուզելութեան հետեւիլը. ալեկոծեալ վիճակ մը, միշտ անհանգիստ, միշտ գրգռուած, ուրկէ փրկուելու համար գերագոյն հրաշքի մը պէտք ունի:

Իրաւ է որ դարձեալ ընկերվարութիւնն է որ պիտի գործէ այս հրաշքը, բայց այն ընկերվարութիւնը՝ որ բնութենէն կը ծնի և անով կը սնանի, որ միմիայն սէր և արդարութիւն կը սերմանէ. այն ընկերվարութիւնը՝ որ ո՛չ ուրոյն ազգ ունի և ո՛չ ուրոյն կրօնք, և ո՛չ ալ մասնաւոր հայրենիք. ա՛ն ինքնին կրօնք մ'է արդէն, կրօնք մը՝ Աստուածային և տիեզերական, ինքնին ազգութիւն մ'է համայն մարդկութեան, և իրեն հայրենիք ունի ամբողջ աշխարհը:

Հերի՛ք ալ, ո՛րչափ որ կրօնքներու, ազգութիւններու և հայրենիքներու անունները չարագործելով՝ մարդկութիւնը սպառեցին, անոր եղբայրական չղթային օղակները փշրեցին. հերի՛ք ա՛լ, ո՛րչափ որ թշնամութիւն և մահ սերմանեցին:

Թո՛ղէ՛ք ալ դրդիչ հրատարակութիւնները, մարդկութիւն այլ եւս Սիրոյ ծարաւի է, եղբայրութիւն պէտք է անոր. ներկայ քաոսային վիճակէն փրկուելու համար: Թո՛ղէ՛ք ազգութեանց տեսակէտները: Աշխարհիս ազգերը մարդկութեան գոյնզգոյն ծաղիկներն են. անոնք իրարու քով դալով՝ մարդկային կատարելութեան փունջը կը կազմեն, անոնք՝ մարդկային գեղեցկութիւնն են, որ աշխարհս կը կատարելագործեն, և անոր վրայէն միօրինակութիւնը կը ջնջեն: Թո՛ղէ՛ք կրօնքներու զանազանութիւնը, անոնք՝ տիեզերաց Արարչին ուղղուած աղերսը կը ներդաշնակեն. անոնց պէսպիսութիւնները՝ հոգիներու անուշահոտ բուրումներն են, որոնք իրար գալով զիրար կ'ամբողջացնեն, և իրարմով կը կատարելագործուին:

Ամենաստորին վատեր են ամէն անոնք, որ տեսակ տեսակ ծթռած տարկութիւններով մարդկութեան մէջ ատելութիւն կը սերմանեն, և ժողովուրդներու տխմարութիւնը կը շահագործեն, և կամ ընկերվարական անուան տակ եղբայրութեանց մէջ պառակտումներ յառաջ բերելով՝ անձնական շահերու կը ծառայեն:

Նոյ. 16 Շիշլի ԼԵՒՈՆ ՏԱԲԷՍ

«ՄԵՂՈՒ»ի Տպարանին մէջ կը տպագրուին, ճաշակով ու խնամքով՝ Գիրք, ամեն տեսակ Ծանուցումներ, Մահազդ, Ընկալագիր, Նամակաթուղթ, Պահարան, Այցետոմս, Եւայլն, Եւայլն:

ԳԻՆԵՐԸ ՉԱՓԱՒՈՐ

ՏՊԱԳՐ. Յ. Գ. ՓԱԼԱԳԱՇԵԱՆ

## ՀԱՐԿՍ ՀԱՐԿԱՒՈՐԱՑ ԵՒ ՊԱՏԻՒՍ ԱՐԺԱՆԱՒԱՐԱՑ

Ամէն ազնիւ մարդիկ իրենց ներքին բնազդէն թելադրեալ, կ'ուզեն ուրիշներն իրենց մասնաւոր արժանիքովը ճանչնալ և գնահատել, անթերի կատարելու համար քաղաքական և ընկերական ազնիւ պարտականութեանց և յարգանքի մատուցումը:

Կենցաղագիտութիւնը մեզի կը պարտաւորէ յարգանքի պակասութեանց մէջ չը գտնուիլ, չի թերանալ մեր պարտուցը մէջ առ ընկերս և առ նմանիս, ամէն առթիւ յարգանք ընծայել ազգային պարտաճանաչութեանց գլխաւոր արժանաւոր գործիչներու, մեզ առաջնորդող անձնուէր հովիւներու, ազգային բարերարներու, յայտնուած մեծ տաղանդներու, իրենց կոչումին գիտակ անշահախնդիր արդիւնաւոր հրապարակագիրներու, դաստիարակներու, ազգային երախտաւորներու, եւն. եւն.:

Եւ հետեւելով այս ազնիւ սկզբունքին, մեր քաղաքային և ընկերական պարտականութիւնները կատարած, որով և տուած կ'ըլլանք հատուցում համար մեր պարտական եղած հարկը, և արժանաւորներու՝ պատիւը:

Եւ սակայն ասոր համար պէտք է շատ խստապահանջ ըլլանք՝ մեր արժանապատուութիւնը և իրաւունքը չի կորսնցնելու, այլ պահպանելու համար:

Այսպէս, երբ խնդիրը կը վերաբերի եկեղեցական նուիրապետութեան, օրինակի համար՝ երէց կամ հովիւ կարգելու պարագային, պէտք է շատ ու շատ ուշադիր և նախանձախնդիր ըլլանք, մեր Ս. Եկեղեցւոյն փառքին համապատասխան և վայել ընտրութիւն կատարելու համար:

Քահանայական ընծայացուները սովորաբար կ'ընտրենք անգործ մարդոց մէջէն. ասոնք ընդհանրապէս ի խնդիր ժամանցի ի շուկայէ կոչեցեալ անարժաններ են: Այս ընտրութեանց առթիւ նկատի չենք առներ եկեղեցւոյ սրբութիւնը և մեր արժանապատուութիւնը: Իբրև եկեղեցւոյ պաշտօնեայ կ'ընդունինք անձնընտիրները, և ոչ թէ իրենց գնահատելի արժանեօք կոչեցեալները: Եւ եթէ իր արժանապատուութեան գիտակ և բանիմաց ժողովրդեան կողմանէ, բողոքի կամ դժգոհութեան ձայներ բարձրանան, չի կարենալով բանաւոր պատասխան մը գտնել, սա սովորական եղած բանաձեւը, յանկերգը շատ խղճալիօրէն առաջ կը քշենք. «Ասկից աւելի արժանաւորը չի կրցանք գտնել, ունի բաւական ուսում, հայր է զաւակաց, եւն.»: Իրաւ է թէ ընծայացուն պէտք է ունենայ բաւական ուսում, բայց

ուման հետ և անկէ աւելի պէտք է ունենայ ընտանեկան և ընկերային բարւոք կենցաղ և կրթութիւն, ըլլայ քաղաքավար, ժուժկալ, ներող, բաւական տարէց և պատկառազդու, միանգամայն փութեռնի իբր հայր հասարակաց. պէտք է ըլլայ բարեպաշտ և ողորմած, և ոչ շահախնդիր [illegible]. պէտք է ըլլայ մխիթարիչ անանկաց և այրեաց, հոգածու որբոց:

Նոյնպէս, իրաւ է թէ ընծայացուն պէտք է ըլլայ հայր զաւակաց, բայց ի՞նչպէս հայր: Այս վերջին՝ պարագան ալ շատ իրաւացիօրէն իբր գլխաւոր պայման մը ընդունուած է մեր նախնիքներէն, վասնզի մեր ամուսնացեալ կղերը պէտք է ունենայ բարւոք դաստիարակութեամբ օժտուած ներկայանալի զաւակներ, իբրեւ արժանիք և ապացոյց իր հայրական հովուեր կոչմանը, որովհետեւ իր այս մեծ կոչումով պարտականութիւններ կը ստանձնէ Ս. Եկեղեցւոյ հանդէպ՝ միանգամայն դաստիարակելու և ուսուցանելու ազգային մանկտին, իբր օրինակ ցոյց տալով իր զաւակները: Բայց այս խիստ կարեւոր պարագան ալ տա՛յա. բոլորովին մոռացութեան մատնուած ըլլալով, ո՛չ ընտրող ժողովրդեան և ո՛չ ալ ձեռնադրող եպիսկոպոսին կողմանէ նկատի կ՚առնուի ժամանակէ մը ի վեր:

Գալով կուսակրօն կղերի եպիսկոպոսացման խնդրոյն, մեր ժողովուրդը յաճախ առանց նկատի առնելու ընտրելիին արժանիքը և իր այս բարձր կոչման համար պահանջելի յատկութիւնները, —վարուց անբծութիւն, համբերատար ոգի, ներող սիրտ, շինող և ողորմածասէր բնաւորութիւն, զուտ և այն ամէն առաքինութիւնները, որոնք մարդս կատարելութեան կը հասցնեն— այո՛, մեր ժողովուրդը՝ կ՚ընտրէ՝ առաջին հանդիպած վարդապետը կը կոչէ, նախ առաջնորդական, յետոյ աւելի բարձր պաշտօններու:

Հաստատենք դպրեվանքներ, յուսոյ վարժարաններ, և վերջապէս արդի սերունդը խմացուցա՛, գիտական և բարոյական իր մեծ մակարդակին հասցնելու համար ի գործ դնենք ամէն ինչ որ կարելի է և օգտակար մեր բոլորին օգտին և մեր նախնական հաստատութեանց բարգաւաճմանը և յառաջդիմութեանը համար, զանոնք յաջս ամէնուն պատկառազդու և յարատեւութեան մէջ պահելով:

Ո՛չ կէս միջոցներով, ո՛չ ալ անտարբերութեամբ, այլ մեր իւրաքանչիւրն իրեն ինկած պարտուց բաժինը այս սուրբ և նախնական գործին ի սպաս դնելով, միշտ յարատեւող ջանքերով և յուսալ՚ց աշխատելով և գործելով, վերականգնենք մեր ազգային հաստատութիւնները և զանոնք բարձրացնել ջանանք իրենց արդի աննախանձելի վիճակներէն. տանք ինչ որ դարը կը պահանջէ, մեր արդի սերունդին մասնաւոր զարգացմանը և ուղիղ բարոյականի գիտակցութեանը համար, և վերջապէս տոհմային դաստիարակութեամբ լաւ անհատներ պատրաստենք, որով ստացած պիտի ըլլանք մեր կղերին ալ բարձրացման. վասն զի կղերը ժողովուրդէն կ՚առնուի և պաշտօն ունի իրեն ծառայելու: Այս կերպով պիտի ունենանք մեզի յաջորդող լաւ դաստիարակուած սերունդ մը և անով ալ լաւ դաստիարակուած կղեր, գիտակից իրենց բարձր կոչման:

Մեծ կզզի ԼԵՒՈՆ ՇԱՄՏԱՆՃԵԱՆ

Ա. Կ. ԹԷՔԵԱՆ

# ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՄԱՀԱՄԵՐՁ

Այո՛, Պ. Միսիոնարներ և Հայ Վերապատուելիներ, դուք ձեր որբերուն սորվեցուցիք ատել իրենց ազգին քաղաքակրթութիւնը և իրենց մայրենի եկեղեցին: Եկեղեցի մ՚որ 2000 տարիներէ ի վեր ծոցէն տուած է հոյակապ մեծ սուրբե՛ր, ինչպէս Նարեկացիներ, Ներսէսներ, Ղեւոնդներ, Շնորհալիներ, Մովսէսներ, Դաւիթներ, Մեսրոպներ և Սահակներ: Մինչեւ իսկ մեր օրերուն մէջ ձեր այն մոլորեալ կարծած եկեղեցին ծնած է իր ծոցէն եկեղեցականներ՝ գիտակ իրենց պաշտօնին մեծութեան և իրենց կոչման վեհութեան, դրական հերոսներ, Աւետարանի անձնուէր քարոզիչնե՛ր, հովիւներ, «առանց ամօթի» ձրի մշակներ Աստուծոյ տան մէջ, ո՛չ թէ վարձկաններ՝ ձեզի պէս տարեկան 500 անգլիական ոսկիներով և տուն մը շինելու պայմանաւ:

Դուք Միսիօնարք, աւելի գէշ ըրիք՝ Ամերիկա ղրկելով մաս մը մեր որբերէն ու որբուհիներէն հեռու, մեր աչքերէն, հակառակ մեր Պատրիարքարանի բողոքներուն, անոնց հագցնելու համար Բրոթեստանտ տարազը: Սակայն պատուհաս չի վերջանար, ձեր տուներուն կը հետեւի Երիտասարդաց Քրիստոնէական ընկերութիւն մ՚եւս: Այս երիտասարդներուն գլուխները դուք կը լեցնէք ատել իրենց ազգին սովորութիւնները և իրենց մայրենի լեզուն: Եթէ վիրաբուժական գործողութիւն մը կատարուի այս երիտասարդ գլուխներուն վրայ, եթէ անոնց ուղեղները բանանք, հոն բան մը չպիտի գտնենք բայց միայն, պարապութիւն՝ ամէն բանէ որ մաքուր է: Երբ ձեր բարոյականէն կը ճառեն միշտ Հնդկաստանէ Չինաստան և աշխարհի ամէն կողմերը, ա՛լ կրնանք երեւակայել բարոյական կացութիւնը ձեր թակարդին մէջ ինկած տղացի հաւատարացներուն ի շահ կտոր մը հացի ու կարագի: Մարդիկ առանց ազգի ու հայրենիքի, առանց խղճի ու սրտի, առանց զգացումի և արժանապատւութեան և առանց կրօնի ու նկարագրի: Մարդիկ որ ամէն ինչ զոհած են մամոնայի համար, որ ամէն ինչ ոտնակոխած են տոլարի մը համար:

Կար ժամանակ մը, ես կը կարծէի թէ միսիօնարները մեծ գործ կ՚ընեն մեր մէջ իրենց դոլէճներով և բարձրագոյն վարժարաններով, կրթական տեսակէտով: Սակայն երբ այս դոլէճներէ ու վարժարաններէ ընթացաւարտներու հետ ծանօթացայ հոս և Ամերիկա, այն տպաւորութիւնը ունեցայ թէ անոնց վրայէն զարհուրելի խորշակ մը անցած է, փճացնելով ամէն ծիլ տոհմային ու բարոյական:

7. Ազգասիրութիւնը շատ անգամ կը ստիպէ բարի մարդիկ ծանօթանալու չար մարդոց հետ: Կար ժամանակ որ չափով մը ներելի էր պաշտօնական յարաբերութիւն հաստատել բողոքական ազգապետի հետ կամ միսիօնարներու հետ, ի սէր մեր հարիւր հազարաւոր որբերուն, հաց ճարելու համար անոնց միջոցաւ, ու ի չգոյէ ուրիշ միջոցի մը, Ամերիկեան բարի քրիստոնեաներէ: Փառք Աստուծոյ, հիմա այլ եւս նոյն չափով ստիպեալ չենք միսիօնարներուն փէշերը համբուրելու. ուրիշ միջոցներ կան ամերիկեան ժողովուրդին համակրանքը մեր վրայ հրաւիրելու, եթէ հարկը պահանջէ, առանց միսիօնարներուն միջամտութիւնը խնդրելու: Ես խիստ նուաստութիւն կը համարիմ այսուհետեւ կրկնումը պաշտօնական յարաբերութեանց այնպիսի մարդոց հետ որոնք երդում ըրած են հայ եկեղեցին երկուքի բաժնելու:

Անգլիական եկեղեցին Անգլիոյ կառավարութեան պաշտօնական եկեղեցին է: Անգլիական եկեղեցւոյ կղերը կառավարութենէ ամսական կը ստանայ: Հոն եւս կայ ոյժեղ բողոքական եկեղեցի մը, սակայն կառավարութեան կողմէ չէ ընդունուած: Անգլիական և հայ եկեղեցիներու վարդապետութիւնները և եկեղեցական կառավարութեան ձեւը գրեթէ միեւնոյն է, և թէ երկու եկեղեցիները մէկ միութիւն մը կրնան ըլլալ շատ քիչ տարբերութեամբ մը: Սակայն Անգլիոյ մէջ անգլիական եկեղեցւոյ կղերը ոչ երբեք կը գիջանի պաշտօնական այցելութիւն տալ բողոքական կղերին: Անգլիական եկեղեցւոյ կղերը լաւ ուսումնասիրած է իր դիրքը և իր արժանապատւութիւնը, մինչդեռ մեր բարձրաստիճան կղերը այնքա՛ն ալ կարեւորութիւն չի տար ազգին արժանապատւութեան, և իր ներկայացուցած եկեղեցին պատմուճաններն ալ կը քաշքշէ պաշտօնական այցելութիւններով:

## ԲԱՐԵԿԱՐԳԻՉ ՄԱՍՆԱԽՈՒՄԲԻ ՄԸ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԷՏՔԸ

### ԱԶԳԱՅԻՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻՆ ՄԷՋ

ՄԵՂՈՒի 12րդ թիւով (Օգոս. 18), Ազգ. Հիւանդանոցի Օժանդակ Մասնախումբերու կազմութիւնը գնահատելով, կը շեշտէինք նաեւ պէտքը Բարեկարգիչ Մասնախումբի մը կազմութեան, եւ կ'ըսէինք.

*«Հոգաբարձութիւնը լաւագոյն գործը կատարած պիտի ըլլայ—Օժանդակ Մասնախումբերու կազմութենէն յետոյ—Բարեկարգիչ Մասնախումբ մ'ալ կարգելով և պաշտօն տալով անոր՝ յաճախակի և անակընկալ այցելութիւններով՝ պաշտօնէից պարտականութեան կատարման և ներքին մատակարարական գործառնութեանց մասին քննութիւն կատարել, հակակշիռ ի գործ դնել, և իր կարեւոր դիտողութիւններն ու զեղծումներու բարձման մասին իր առաջարկութիւնները ներկայացնել Հոգաբարձութեան, առ ի Տնօրինութիւն։ Բնականաբար Հոգաբարձութիւնն ալ, որ կ'ընդունինք թէ օժտուած է ամէն բարի տրամադրութիւններով, լրջօրէն պիտի վերաբերուի եղած առաջարկութեանց և թելադրութեանց հանդէպ, և դարմանն պիտի տնօրինէ ու գործադրէ յօգուտ Հաստատութեան, որուն բարիքին և ո՛չ թէ փառքի համար ստանձնած է պաշտօն։ Կարեւոր է որ Բարեկարգիչ Մասնախումբի անդամներն ընտրուին առաւելապէս մօտակայ թաղերէն, օրինակի համար՝ Սամաթիայէն և Գաբըր գիւղէն, որպէս զի անոնց յաճախակի այցելութիւնները կարելի ըլլան։»*

Անկէ ի վեր *չորս ամիս* անցաւ եւ այս *խիստ կարեւոր* առաջարկը նկատողութեան չառնուեցաւ Հոգաբարձութեան կողմանէ, եւ այս չորս ամսուան ընթացքին շարունակուեցան միշտ ալ դժգոհութեանց տեղի տուող այն ամէն սովորական արարքներ որոնք ամէն ատեն զգալի ըրած են ներքին բարեկարգութեան անհրաժեշտ պէտքը, եւ միշտ ալ անտես առնուած են պաշտպանեալ մարմիններէն:

Կը մտածէինք անդրադառնալ այս խնդրոյն, եւ անոր կարեւորութեանը վրայ կրկին հրաւիրել Հոգաբարձութեան ուշադրութիւնը, եւ ահա՛ առջի օր մեր սոյն կարեւոր առաջարկին արձագանգը կամ կրկնութիւնը տեսանք օրաթերթի մը մէջ—չորս ամիս յետոյ: Հետեւաբար առիթը ներկայացած կը համարինք յիշեցնելու մեր չորս ամիս առաջուան առաջարկը, եւ կարեւորութեամբ անոր այլ եւս նկատառումը եւ գործադրութիւնը պահանջելու, մանաւանդ որ չորս ամսուան ընթացքին մէջ, ներքին բարեկարգութեան որ եւ է լուրջ ձեռնարկ մը չէ ի գործ դրուած եւ միեւնոյն անբաղձալի վիճակն է որ կը շարունակուի:

Չենք կարծեր որ Հոգաբարձութեան Պատ. անդամներն այն կարծիքն ունին թէ Հիւանդանոցի պարիսպներէն ներս իրաց վիճակը վարդագոյն է, որով եւ բարեկարգութեան խնդիր յարուցանելն անտեղի: Չենք կարծեր, որովհետեւ գիտենք թէ անոնք ալ ականջներ ունին, եւ բնականաբար մեր եւ ուրիշ շատերու լսածներէն զէթ մաս մ'ալ իրենք կը լսեն: Սկզբունքով բարեկարգութեան ալ հակառակ չեն կրնար ըլլալ, որովհետեւ իրենց կոչումին անհամապատասխան եւ անբնական պիտի ըլլար այդ: Ուրեմն ի՞նչն է որ կը կասեցնէ զիրենք:

Ի՛նչ որ ալ ըլլայ սակայն այս մասին իրենց անփութութեան կամ վարանումի (չենք կրնար ըսել չկամութեան) պատճառը, մենք չենք յուսահատիր եւ յաճախ պիտի անդրադառնանք այս խնդրոյն, մինչեւ որ վերջապէս հասկցուի թէ, այս կարեւոր խնդրոյն նկատառումը անտես առնուելով՝ բարիք մը չէ որ կը գործուի Ազգին հիւանդներու. ծերերուն, յիմարներուն, ո՛չ ալ Հոգաբարձութեան հանդէպ Ազգին վստահութիւնն է որ կ'արդարանայ: Ընդհակառակը:

---

*ԹՕՓՂԱՊՈՒԻ Ս. Նիկողայոս եկեղեցւոյ տօնախմբութեան և նորոգութեան առթիւ, Ուր. Օգոս. հանդիսաւոր արարողութիւններ տեղի ունեցան։ Ս. Պատրիարք Հայրը պատարագեց և քարոզեց։ Արարողութեանց կը մասնակցէր նաև Կրօն. ժողովոյ անդամ Տ. Սարգիս եպիս.։ Կը սպասաւորէին Տ. Զգօն Զարխուկեան և Տ. Արամ քահանայները։ Երգեցողութիւնները կատարուեցան Գողթան երգչախումբին 50 է աւելի անդամները ղեկավարութեամբ Տ. Գայլըճեան։ Պատարագէն յետոյ մատաղաբաշխութիւն տեղի ունեցաւ։ Սեղան մը սարքուեցաւ Գողթան երգչախումբին համար, սեղան մ'ալ Ս. Պատրիարքին և մասնաւոր հրաւիրեալներու համար, և բաժակաճառեր արտասանուեցան։*

*Նորոգութեան համար ծախսուած է միայն 1100 ոսկի։ Դիտելի է որ եկեղեցիին ներքին ներկը լաւագոյն ներկերը գործածուած ըլլալով հանդերձ, քառ. մեթրը արժած է մի միայն 85 դրուշ, մինչ Թօքաթլեան պանթօկին ներկին համար քառ. մեթրը 650 դրշ.ի հաշիւ մը ներկայացած էր։*

*Սոյն նորոգութեան գործին մէջ իրենց ցոյց տուած խղճամիտ և անձնուէր աշխատութեան համար կ'արժէ յիշատակել շինութեան յանձնաժողովոյ անդամոց անուններն. Տ. Արամ Քհ. Գնունի. Թաղ. խորհրդոյ ատենապետ՝ Միհրան Աչճեան, Ատենադպիր՝ Օննիկ Յարութիւնեան, Գանձապետ՝ Խաչիկ Թօքաթլեան, Օ. Մարտիրոսեան, Տ. Գօլանճեան, Յար. Դաւիթեան, Յար. Քէչիչեան, Ժիրայր Դալփաքճեան, Յար. Գաբրիէլեան, Ստեփան Սէմէրճեան, Զենոբ Արապեան և Լեւոն Մխիթարեան և Անտոն էֆ. Օհանեան էֆէնտիները։*

*ՊԱԼԸԳԼԸԻ Ազգ. գերեզմանատան անցեալ և ներկայ գործառնութիւնները քննելու պաշտօն ստացած է Խառն ժողովէ՝ Տ. Սարգիս եպիս.։*

*Տ. ՎԱՀՐԱՄ Քհ. Յակոբեանի պաշտօն յանձնուեցաւ Խառն ժողովէն՝ քննել Սկիւտարի Ազգ. գերեզմանատան շուրջ յարուցուած խնդիրը, ինչպէս նաև եկեղեցական հասոյթներու վերաբերեալ սակացոյցը։*

---


## ՀԱՅԱՏԱՌ ԹՐՔԱԲԱՐԲԱՌ ՎԷՊԵՐ

### ՀԱՅՁՈՒԱԳԻՒՏ ԳՐՔԵՐ

| | ՂՐՇ. |
|---|---|
| Սիմոն վէ Մարի. 693 էջ | 400 |
| Մէճնունլէր Թապիպի. 3 հտր. 770 էջ | 500 |
| Էլմաս Թաճիրի. 3 հտր. 1344 էջ | 600 |
| Էթմէքճի խաթուն. 6 հտր. 1501 էջ | 800 |
| Սէրսէրի Եահուտի. 6 հտր. 2973 էջ | 1000 |
| Իւչ միլիոն Թրախումա 2 հտր. 1216 էջ | 300 |
| Բարիս Ֆաճիալարը. 4 հտր. 1711 էջ | 600 |
| Թիւրլիւթօն. 2 հտր. 693 էջ | 250 |
| Բարիս սէվտալէրի. 2 հտր. 800 էջ | 400 |
| Սարը ինճու. 458 էջ | 250 |
| Տանիէլին էսրարը. 310 էջ | 150 |
| Գայիմ վալիտէ. 2 հտր 1441 էջ | 500 |
| Պէօյիւք Եիւրէք. 4 հտր. 898 էջ | 500 |
| Պին պիր կիճէ. 4 հտր. 1245 էջ | 800 |
| ՐՕԳԱՄՊՕԼ. 6 հտր. կաշեկազմ | 2000 |
| Ղարիպ պիր սըր։ 2 հտր. 801 էջ | 400 |
| Ագապի հէքեայէսի. | 250 |

*Ամէնքն ալ կազմուած են։ Նշանակուած գիներուն վրայ աւելցնել տասը առ հարիւր բօսթի ծախք։*

*Դիմել ՓԱԼԱԳԱՇԵԱՆ Գրատուն, Բերա Ալթընճը տայիրէ, Գապրիստան փողոց. Թիւ 171։*

— Կատարելապէս ճիշդ է, ըսաւ փերեզակը, բայց պարոնը չըսեր ձեզի թէ…

— Պէտք է լռութիւն պահէք իմ մասիս, բարեկամներուն մասին, բայց մանաւանդ Թագուհիին մասին բան մը չխօսիք, ապա թէ ոչ ամէնքս ալ կորուստ կը մատնէք, առանց ձեր անձն ազատելու։

— Եւ տ'Արդանեան չուարած փերեզակը դէպ ի պահակները հրեց և ըսաւ անոր.

— Դուք անպիտանին մէկն էք, սիրելիս, ինձմէ՝, հրացանակիրէ մը սոսկ կ'ուզէք հա՞։ Հիմա բանտ պացէք որ տեսնէք։ Պարոննե՛ր, նորէն կ'ըսեմ, բանտ նետեցէք սա մարդը և կարելի եղածին չափ երկար ատեն հոն պահեցէք զինքը, որպէսզի ժամանակ ունենամ պարտքս վճարելու։

Պահակները շատ շնորհակալ եղան և իրենց որսը տարին տարին։

Երբ վար կ'իջնէին, տ'Արդանեան պահակներուն պետին ուսին զարկաւ։

— Ես ձեր կեանքին և դուք ալ իմ կեանքիս համար գինի չխմե՞նք, ըսաւ Մ. Պօնասիէօի տուած գինիէն երկու գաւաթ լեցնելով։

— Ինծի համար մեծ պատիւ մը պիտի ըլլայ, ըսաւ պահակներու պետը։ Երախտագիտութեամբ կ'ընդունիմ։

— Ուրեմն ձեր կենա՛ցը, ի՞նչ է ձեր անունը։

— Պուարընար։

— Մ. Պուարընար։

— Ձեր կենացը, ազնուակա՛ն։ Ձեր անունը ի՞նչ է, եթէ կը հաճիք։

— Տ'Արդանեան։



սպասցնեն առաջին սենեակին մէջ, դուռը զարնողը ներս կ'առնեն և կը ձերբակալեն։ Այս կերպով երկու երեք օրուան մէջ նոյն տունը յաճախողներուն ամէնքն ալ կը բռնեն։ Ահա այս է ծուղակը։

Այսպէս, ծուղակ մը լարեցին Մ. Պօնասիէօյի յարկաբաժնին մէջ և ո՛վ որ եկաւ հոն, ձերբակալուեցաւ և հարցաքննուեցաւ Կարտինալին մարդոցը կողմէ։ Հարկ չկայ ըսելու թէ որովհետեւ մասնաւոր անցք մը կ'երթուէր առաջին յարկը, ուր կը բնակէր տ'Արդանեան, անոր եկողները զերծ կը մնային հարցաքննութենէ։

Եւ արդէն երեք հրացանակիրները միայն կուգային։ Ամէնքն ալ զատ զատ հետազօտութիւն կատարած էին և չէին կրցած բան մը երեւան հանել։ Աթոս մինչեւ անգամ Մ. տըԴրէվիլի հարցումներ ուղղած էր, բան մը որ մեծ զարմանք պատճառած էր հարյուրապետին, ծանօթ ըլլալով արժանընտիր հրացանակիրին սովորական լռասիրութիւնը, բայց Մ. տը Դրէվիլ բան մը չէր գիտեր։ Իր գիտցածը սա էր միայն որ վերջին անգամ երբ Կարտինալը, Թագաւորը և Թագուհին տեսած էր, Կարտինալը շատ մտահոգ երեւոյթ մը ունէր, Թագաւորը վրդոված էր և Թագուհիին կարմրած աչքերը կը ցուցնէին թէ գիշերը անքուն անցուցած կամ լացած էր, բայց այս վերջին պարագան իր ուշադրութիւնը գրաւած չէր շատ, որովհետեւ Թագուհին, ամուսնանալէն ի վեր, միշտ անքուն կ'անցընէր գիշերները և կուլար։

Մ. տը Դրէվիլ պատուիրեց Աթոսի, որ ամէն պարագայի մէջ ծառայէ Թագաւորին և մանաւանդ Թագուհիին և խնդրեց որ այս միեւնոյն պատուէրը



Դայով տ'Արդանեանի, տունէն դուրս չէր ելնէր։ Իր սենեակը դիտարանի վերածած էր։ Պատուհաններէն կը դիտէր անոնք որ ձերբակալուելու կուգային։ Յետոյ, որովհետեւ տախտակամածին փայտերը հանած էր և գետինը ծակ մը բացած էր և վարի սենեակէն, ուր հարցաքննութիւնները տեղի կ'ունենային, պարզ ձեղունով մը զատուած էր, կը լսէր ինչ որ կը խօսէին հարցաքննիչները և ամբաստանեալները։ ·

Հարցաքննութիւնները, որոնցմէ առաջ ձերբակալուած անձին վրայ մանրազննին խուզարկութիւն մը կ'ըլլար, գրեթէ միշտ սա ձեւով տեղի կ'ունենային։

— Տիկին Պօնասիէօ իր էրկանը կամ ուրիշ մէկու մը տալու համար բան մը յանձնե՞ց ձեզի։

— Մէկը կամ միւսը բերանացի գաղտնիք մը հաղորդեցի՞ն ձեզի։

Եթէ բան մը գիտնային, ասանկ հարցումներ չէին ըներ, ըսաւ տ'Արդանեան ինքնիրեն։ Հիմա ի՞նչ կ'ուզեն գիտնալ։ Արդեօք կ'ուզեն գիտնալ թէ Պըքինըքէմի Դուքսը Բարի՞զ կը գտնուի և թէ Թագուհիին հետ տեսակցութիւն մը ունեցած է կամ թէ պիտի ունենա՞յ։

Տ'Արդանեան կանգ առաւ այս գաղափարին վրայ, որ իր լսածներէն դատելով, հաւանականութենէ զուրկ չէր։

Հիմակուհիմա, ծուղակը լարուած էր միշտ, ինչպէս նաեւ տ'Արդանեանի արթնամտութիւնը։

Խեղճ Պօնասիէօյի ձերբակալութեան հետեւեալ իրիկունը, երբ Աթոս տ'Արդանեանէ բաժնուելով Մ.



սուրը մերկացուցած խոյացաւ Մ. Պօնասիէօյի յարկաբաժինը, որ ետ դուռը անշուշտ զսպանակէ մը շարժելով ինք իր վրայ գոցուեցաւ։

Այն ատեն Պօնասիէօյի դժբախտ տունին մէջ բընակողները և ամէնէն մօտ դրացիները, լսեցին բարձրաձայն աղաղակներ, ոտքի դոփիւններ, սուրերու շառաչիւններ և կարասիներու խորտակման երկարատեւ ձայներ։ Յետոյ պահ մը եւքը անոնք որ այս աղմուկին վրայ պատուհանները թափեր էին, պատճառը հասկնալու համար, տեսան որ դուռը նորէն բացուեցաւ և չորս սեւազգեստ մարդեր ոչ թէ դուրս ելան, այլ սարսափահար ագռաւներու պէս թռան գնացին, սեղաններուն անկիւնները ձգելով իրենց թեւերուն փետուրները, այսինքն իրենց զգեստներուն ծուէնները և իրենց վերարկուներուն կտորները։

Տ'Արդանեան պէտք է ըսել թէ յաղթական ելած էր առանց շատ նեղութիւն քաշելու, վասն զի պահակներէն մէկը միայն զինուած էր և ան ալ ձեւի համար պաշտպանեց ինքզինքը։ Իրաւ է թէ միւս երեքը փորձած էին երիտասարդը ծեծել աթոռներով, աթոռակով և հողէ ամաններով, բայց կաւքօնին կողմէ սուրի երկու երեք հարուած ստանալով, սարսափած ու փախած էին։ Տասը վայրկեանը բաւական եղած էր զանոնք պարտութեան մատնելու համար և տ'Արդանեան ռազմադաշտին տէրը մնացած էր։

Դրացիները, որոնք իրենք իրենց պատուհանը բացած էին չփոթութիւններու և անվերջ կռիւներու այս ատենուան մէջ՝ Բարիզի բնակիչներուն յատուկ եղած պաղարիւնութիւնով, գոցեցին նորէն՝ երբ չորս սեւազգեստ մարդերուն փախչիլը տեսան։ Իրենց բնազ-

— Չեր կինացը, պարո՛ն։

— Եւ առանցմէ աւելի, պոռաց տ՚Արդանեան, իրր թէ խանդավառած, Թագաւորին ու Կարտինալին կենացը։

Պահակներուն պետը թերեւս կասկածէր տ՚Արդանեանի անկեղծութեան վրայ, եթէ գինին գէշ ըլլար։ Բայց որովհետեւ գինին ընտիր էր, համոզուեցաւ։

— Բայց չառ գէշ բան ըրիք, ըսաւ Բորթօս, երբ պահակներուն պետը իր ընկերներուն միացաւ և երբ չորս բարեկամները մինակ մնացին։ Չորս հրացանակիրներս թող տուինք որ օգնութիւն խնդրող ապառախտ մը ձերբակալուի, եղած բան է՞։ Չեմ համկնար որ ազնուական մը ինչպէս դաւաթ կը պարպէ պանդխտութեան մը հետ։

— Բորթօ՛ս, ըսաւ Արամիս, Աթօս արդէն բառ քեզի թէ պարզամիտ ես։ Ես ալ անոր կարծիքէն եմ, տ՚Արդանեա՛ն, դուն մեծ մարդ ես, և եթէ Մ. տը Թրէվիլի տեղը անցնիս, քու պաշտպանութիւնդ պիտի խնդրեմ, որպէս զի աբբայարան մը յանձնես ինծի։

— Ա՛հ, խելքս պիտի կորսնցնեմ, ըսաւ Բորթօս. տ՚Արդանեանի բրածին կը հաւնի՞ք։

— Հարկաւ, ըսաւ Աթօս, ո՛չ միայն կը հաւնիմ, այլ զինքը կը շնորհաւորեմ ալ։

— Եւ հիմա. պարոննե՛ր, ըսաւ տ՚Արդանեան, առանց իր ընթացքին նկատմամբ բացատրութիւն տալու Բորթօսին, «ամէնքը մէկին և մէկը ամէնուն համար», այս է մեր նշանաբանը այնպէս չէ՞։

— Սակայն, ըսաւ Բորթօս։

— Չեռքդ երկնցո՛ւր և երդում ըրէ՛, պոռացին Աթօս և Արամիս միաբերան։



Իր ընկերներուն օրինակէն ազդուած և քիթին տակէն հայհոյելով, Բորթօս ձեռքը երկնցուց և չորս բարեկամները միաձայն կրկնեցին տ՚Արդանեանի առն տուած բանաձեւը։

«Ամէնքը մէկին և մէկը ամէնուն համար»։

— Լա՛ւ, թո՛ղ ամէն մարդ իր տունը քաշուի հիմա, ըսաւ տ՚Արդանեան, որպէս թէ իր բոլոր կեանքին մէջ հրամայելու վարժուած ըլլար։ Ուշադրութի՛ւն ըրէ՛ք, վասն զի այս վայրկեանէն սկսեալ Կարտինալին հետ պայքարի սկսած ենք։

## Ժ

## ԾՈՒՂԱԿ ՄԸ 17ՐԴ ԴԱՐՈՒՆ ՄԷՋ

Ծուղակի գիւտը մեր օրերը եղած չէ։ Երբ ընկերութիւնները, իրենց կազմութեան ատեն ոստիկանութիւն մը հնարեցին, այդ ոստիկանութիւնը ծուղակներ ստեղծեց։

Եւ որովհետեւ մեր ընթերցողները թերեւս ընտանի չեն տակաւին Ժէրիւզալէմ փողոցի արկօղեան բարբառին և թէ մեր գրիչ չարժելէն ի վեր, այսինքն աւանդերէն աւելի է ի վեր առաջին անգամն է որ կը գործածենք այս բառը այս իմաստով, բացատրենք թէ ի՛նչ է ծուղակը։

Երբ ո՛ և է տան մը մէջ ոճիրով մը ամբաստանուած մարդ մը ձերբակալեն, այդ ձերբակալութիւնը



զարնէր և երբ Բլանշէ, որ տակաւին անկողինը չպառկած չէր։ իր գործին կ՚սկսէր, փողոցին դուռը զարնուեցաւ։ Դուռը խկոյն բացուեցաւ և նորէն գոցուեցաւ։ Մէկը բռնուած էր ծուղակին մէջ։

Տ՚Արդանեան խկոյն խոյացաւ այն տեղը ուր տախտակամածին մէկ մասը հանուած էր, պառկեցաւ և մտիկ ըրաւ։

Շատ չանցած՝ լսուեցան աղաղակներ և յետոյ հեծեծանքներ, զոր կը ջանային խեղդել։ Հարցաքննութիւն չկար։

— Վա՛յ անզգամ, ըսաւ տ՚Արդանեան ինքնիրեն, կինի կուգայ որ բռնուողը կին մըն է, որուն վրան դլուխը կը խուզարկեն և ան ալ դէմ կը դնէ։ Թշուառականները կը բռնանան դային։

Եւ տ՚Արդանեան, հակառակ իր խոհեմութեանը, ամէն ճիգ կ՚ընէր, որպէս զի տակի սենեակին մէջ տեղի ունեցած տեսարանին չխառնուի։

— Բայց ձեզի կ՚ըսեմ թէ այս տանտիրուհին եմ, պարոննե՛ր։ Ձեզի կ՚ըսեմ թէ տիկին Պօնասիեօն եմ։ Ձեզի կ՚ըսեմ թէ թագուհիին կը ծառայեմ, կը պոռար հէք կինը։

— Տիկին Պօնասիեօ՛, մրմռաց տ՚Արդանեան, արդեօք ամէնուն փնտռածը ես գտած ըլլալու չափ բախտաւո՞ր պիտի ըլլամ։

— Մենք ալ ճիշդ ձեզի կ՚սպասէինք, պատասխանեցին հարցաքննիչները։

Ձայնը հետզհետէ կը խեղդուէր։ Աղմկալի շարժում մը լսուեցաւ, զոհը կը մաքառէր որչափ որ կին մը կրնայ մաքառիլ չորս մարդերու դէմ։



որ այնուհետեւ անկապակից հնչիւններ միայն կը հանէր։

— Բերանը դայլ կը դնեն, քաշքշելով կը տանին, պոռաց տ՚Արդանեան, զսպանակէ մը շարժածի պէս ոտք ելնելով։ Սուրս աղէկ որ քովս է. Բլանշէ՛։

— Ի՛նչ է, պարոն։

— Վազէ գտիր Աթօսը, Բորթօսը և Արամիսը։ Երեքէն մէկը անշուշտ տունը պիտի ըլլայ. թերեւս երեքն ալ տուն դարձած են. թող իրենց զէնքերը առնեն և վազելով հոս գան։ Ա՛հ, կը յիշեմ, Աթօս Մ. տը Թրէվիլի ապարանքն է։

— Բայց ո՞ւր կ՚երթաք, պարո՛ն, ո՞ւր կ՚երթաք։

— Պատուհանէն վար կ՚իջնեմ, պոռաց տ՚Արդանեան։ Դուն տախտակամածին փայտերը տեղը դիր, դետինը աւլէ, դուռնէն դուրս ելիր և վազէ գնա բսած տեղս։

— Օ՛հ, պարո՛ն, պիտի սպաննուիք, պոռաց Բլանշէ։

— Լռէ՛, ապուշ, ըսաւ տ՚Արդանեան, և ձեռքովը պատուհանին դուրս ելած մասը բռնելով, վար նետուեցաւ անվնաս առաջին յարկէն որ բարերախտաբար բարձր չէր։

Յետոյ չուտով մը գնաց և դուռը զարկաւ ինքնիրեն մրմռալով։

— Ես ալ ծուղակին մէջ պիտի բռնուիմ և վա՛յ այն կատուներուն որ ինծի պէս մուկի մը հետ պիտի չափուին։

Հազիւ թէ ուռնակը հնչեց երիտասարդին ձեռքին տակ, ներսի աղմուկը դադրեցաւ, ոտքի ձայները մօտեցան, դուռը բացուեցաւ և տ՚Արդանեան

# ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ԱՃԻՒՆՆԵՐՈՒ ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆ.— Կեսարիոյ բազմարդիւն և բազմերախտ առաջնորդ Տրդատ Եպս. Պալեան 1922ի աշնան գաղթականներու հետ Յունաստան անցած և 1923ի ամառը վախճանած ըլլալով, թաղուած է Աթէնքի յունական գերեզմանատան մէջ: Իր հողակոյտը անհետ չկորսուելու համար, ձեռնարկուած է փոխադրել իր աճիւնները Երուսաղէմ, ուր պիտի ամփոփուի Սիոնի Ս. Փրկչի վանուց Ազգ. գերեզմանատան մէջ, Ս. Աթոռոյ հանգուցեալ եպիսկոպոսներու շարքին: Փոխադրութեան ծախուց համար, Նիւ Եորքէն Կիւլպէնկեան եղբարք տրամադրած են 150 տոլար: Փոխադրութեան համար հարկ եղած պաշտօնական ձեռնարկութիւնները ու գործողութիւնները կատարած է առաջնորդ Մազլըմեան Սրբազան:

— ԵՒՐՈՊԱՅԻ Նախագ. Պատուիրակ Գրիգորիս Եպս. Պալաքեան հրաժարած և Էջմիածնայ գերագոյն Խորհուրդն ընդունած ըլլալով հրաժարականը, իրեն յաջորդ նշանակուած է նոյն խորհուրդին անդամներէն Գարեգին Եպս. Յովսէփեան որ ուսեալ եկեղեցական մ'է կ'ըսուի:

Պալաքեան Եպսկ. համար կ'ըսուէր թէ, Էջմիածնայ համար հանգանակուած գումարներն անհաշիւ կերպով կը մսխէ: Տ. Գարեգին Եպս. պիտի քննէ նաև այս խնդիրը: Բարիզի եկեղեցիին Հոգաբարձութիւնը իբրև ճամբու ծախք 500 տոլար ղրկեր է Ս. Էջմիածին:

— ԵՐՈՒՍԱՂԷՄԻ. Ս. Յարութեան տաճարին նորոգութեան ձեռնարկուած է:

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆ.— Յանկարծական մահուամբ նորոգ հանգուցեալ այրի տիկին Մէօհրիւպէ Գ. Կիւմիւշկէրտան, կողակից հանգուցեալ Գրիգոր Կիւմիւշկէրտանի, իր Թագսիմի բնակարանը կտակած է կէս առ կէս Ազգ. Հիւանդանոցին և Գալֆաեան որբանոցին: Հանգուցեալն իր մնացած հարստութիւնն ալ գրեթէ ամբողջութեամբ նուիրած է Ազգին, մաս մը բաժին միայն հանելով իր պարագաներուն, իր մանչ և աղջիկ որբերուն և իր սպասուհիին: Կտակին ձեռնարկութիւնները կատարած է փաստաբան Տիար Թորգոմ Տամատեան:

— ՊԵՐԼԻՆԻ Հայ գաղութը Նոյեմբերէն ի վեր ունեցաւ իր դպրոցը, Մոմզէն գիմնազիոնի շէնքին մէջ, շնորհիւ գաղութին Միութեան անխոնջ ջանքերուն: Դր. վրդ Շահլամեանը Հոգեւոր Հովիւ կարգելու ձեռնարկներ ալ կ'ունենան:

— Տիկ. Սեւումեան, ծանօթ երգչուհի, Միլանոյի մէջ ամուսնացած է Տօք. Արզումանեանի հետ: Տիկինը պիտի շարունակէ արուեստագէտուհիի իր ասպարէզը:

— ԱՄԵՐԻԿԵԱՆ քաղաքացի հայազգի Տիգրան Խան Քէլէկեան, հնութեանց հանրածանօթ վաճառական Բարիզի և Նիւ Եորքի հրապարակներուն վրայ, Ֆրանսայի Արտաքին Գործերու Նախարարութեան առաջարկով, Ֆրանսական Կառավարութենէն ստացեր է Պատուոյ Լէգէոնի Սպայի աստիճան:

— ՊՐԱԶԻԼԻՈՅ Ս. Բաւլօ քաղաքի Հայ եկեղեցիին մէջ տեղւոյն Հայերը հաւաքուելով, կազմած են Գաղութային Միութիւն մը, նպատակ ունենալով Հայերը զերծ պահել այլասերումի վտանգէն:

— Յունաստանէն փոխադրուած 1222 գաղթականներ Հայաստան հասած են:

— Հայ Բարեգործական Միութեան Ընդհ. Տնօրէնի պաշտօնին կոչուած է Տիար Վահան Մալէզեան:

— 1200 տոլարի նոր նպաստ մ'ալ ըրած է յունահայ կարօտ գաղթականներուն՝ ծանօթ բարեգործ Տիար Միհրան Գարակէօզեան, որ իր վաղամեռիկ զաւկին ի յիշատակ՝ տարեկան 6000 տոլար յատկացուցած էր անկէ առաջ, նոյն նպատակին համար:

— Քաղ. Ժողովին կողմէ դիմումներ եղած են Վարչապետութեան, Ազգ. Մեծ Ժողովի Նախագահութեան, Ներքին, Դատական և Ելեւմ. Գործավարութեանց, Պոլիս գտնուող գաւառապատական կալուածներուն գրաւման առթիւ:

ՍԿԻՒՏԱՐԻ երեք թաղերու Աղքատախնամ Մարմինը կազմուեցաւ հետեւեալներէն.

Նախագ՝ Տ. Համազասպ Ա. քհ. Էքսէրճեան.
Ատենապետ՝ Տիար Պօղոս Ալպօյաճեան.
Ատենադպիր՝ Տ. Օննիկ Քէշիշեան.
Գանձապետ՝ Տ, Խաչիկ Յովհաննէսեան,
Մատակարար՝ Տ. Մանուկ Տ. Յակոբեան.
Հաշուեքննիչ՝ Տ. Շահէն Շահինեան:

Անդամներն են՝ Տեարք Կրպ. Պօյաճեան, Գր. Սանտալճեան, Գր. Աճէմեան և Ասատուր Ալթունեան:

ՊԷՇԻԿԹԱՇԻ Թաղ. Խորհուրդը մնացած ըլլալով որ վարժարանին հիմնագիրը փոխանակ, Ուսում. Խորհուրդին կողմանէ Թաղ. Ժողովին տեղեկագրուած է խնդիրը: Թաղ. Խորհուրդը կ'առարկէ թէ, հիմնագիրը կը գործէ առանց Թաղ. Խորհուրդին հետ խորհրդակցութեան և Տնօրէնն ալ իր հրահանգներն անկէ կը ստանայ:

— Էվէրէկ-Ֆէնէսէի վարժարանն ու եկեղեցին փակուեր են:

— Աթէնքայի եկեղեցիին փղսկրեայ թանկագին դաւազանը անյայտացեր է:

— Պէշիկթաշէն Ընդհ. Ժողովոյ անդամ ընտրուեցաւ Տիար Յակոբ Այճեան, 170 քուէներուն 104ը շահելով:

— Բերայի Թաղ. Խորհուրդը վարձած է Հայ կաթոլիկ հասարակութեան պատկանող Համազգային վարժարանը վերածելու համար Մանկապարտէզի, Էսաեան վարժարանի շէնքին անբաւականութեան պատճառաւ:

ՊԱԼԱԹՈՒ Դպրաց Դասին պետ ընտրուած է Տիար Կարապետ Ծերունեան: Կրօն. Ժողովը վաւերացուց այս ընտրութիւնը:

ԿՐՕՆ. ԺՈՂՈՎԸ վաւերացուց Գատըգիւղի և Գում գաբուի դպիր Դպրաց Դասերուն վերակազմութիւնը, և Տիար Պօղոս Պէզազեանի Գում գաբուի Ս. Յարութիւն եկեղեցւոյ Դպրապետ ընտրուիլը:

— Գուրու չէշմէի Թաղ. Խորհրդէն պակսած երկու անդամներուն տեղ ընտրուեցան Տեարք Մարտիկ Միքաճեան և Քերովբէ Գույումճեան:

— Խնամակալութեան անդամ ընտրուեցան Տեարք Տօք. Մ. Գալֆայեան և Միհրան Այաճեան:

— Ուսում. Խորհուրդէն հրաժարած Տիար Գալուստ Մալաթեանի տեղ ընտրուեցաւ Տիար Համբարձում Յարութիւնեան:

ԿՐՕՆ. ԺՈՂՈՎԸ Աւագութեան աստիճանին բարձրացուց Պալաթու Տ. Աբէլ Երէցեան և Սամաթիոյ Տ. Արիստակէս Հիսարեան քահանաները, ի վարձ իրենց երկար. ամեայ բարուոք ծառայութեանց:

## «ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ»Ի ՔԱՌԱՍՆԱՄԵԱԿԸ

Վիեննայի Մխիթարեանց «Հանդէս Ամսօրեայ» Հայագիտական Ուսումնաթերթը Դեկտ. 22ին պիտի տօնէ իր քառասնամեակը:

Այս առթիւ Խմբագրութիւնը լոյս պ'ընծայէ բանասիրական բացառիկ թիւ մը, համեւրոպական մասնագէտ Հայագէտներու գործակցութեամբ:

«Հանդէս Ամսօրեայ» եւրոպական բանասիրութեան մէջ Հայ բանասիրութեան դիրքն ու արժանիքը միշտ բարձր պահելու կոչում ունենալով, իրեն հետ մենք ալ կը կարծենք թէ ամէն Հայու պարտքն է, «պարզապէս Հայ քաղաքակրթութեան տարածման գործին համար «Հանդէս Ամսօրեայ»ի չայլած բարոյական ու նիւթական ջանքերու համակրիլ ու սիրայօժար սատարել անոր զարգացման ու բարգաւաճման՝ բաժանորդագրութիւններով ու «Հանդէս Ամսօրեայ»ի դրամագլխոյն կազմութեան համար համակրանքի փոքրիկ նուէրներով:» Բաժանորդագրութիւնները և փոքրիկ նուէրներն իրարու միանալով, կը կազմեն մեծ ույժ մը և կը ապահովեն Հանդէսին գոյութիւնը: «Հանդէս Ամսօրեայ» հրատարակութիւն մ'է արդարև, նիւթական և բարոյական ամէն քաջալերանքի արժանի: Ջերմապէս կը շնորհաւորենք իր քառասնամեայ տարեդարձը և կը մաղթենք բազմաւած շրջաններ:

H. PALAKACHIAN. Directeur - Rédacteur
de la Revue Hébdomad. „MÉGHOU„
171, Rue Kabristan, Péra, CONSTANT/PLE

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Թուրքիա՝ տարեկան 250, վեցամսեայ 125 ղր.
Եւրոպա՝ — 60 ֆրանք.
Ամերիկա՝ — 3 Տօլար.

# مرغوب

صاحب و مدیر مسئولی هوونان پالاقاشیان
استانبول بك اوغلی قبرستان سوقاق نومرو ۱۷۱

Արտօնատէր, Խմբագիր եւ Պատասխ. Տնօրէն
Յ. Գ. ՓԱԼԱՔԱՇԵԱՆ
Կ.ՊՈԼԻՍ, Բերա, Գապրիստան փողոց, թիւ 171

## ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

### ՖՐԱՆԿԱԽՏ—ՍԻՖԻԼԻՍ

(Ֆասնաական Ընկերային Առողջապահութեան Ազգ. պաշտօնատունէն հրատարակուած)

Ֆրանկախտը ամօթալի հիւանդութիւն մը չէ։

Միայն սեռային յարաբերութիւններու հետեւանքով չէ որ մարդ կը վարակուի, այլ՝ յաճախ զիպուածով։

Թոքախտին պէս միքրոպային հիւանդութիւն մըն է։

Ֆրանկախտը փոխանցիկ, նենգ եւ դաւաճան հիւանդութիւն մըն է, որ կը փոխանցուի ուղղակի հպումով կամ անուղղակի զանազան առարկաներու միջոցով. ինչպէս պատառաքաղ, գաւաթ, ծխափող, ածելի եւայլն։

Ֆրանկախտը յաճախ ժառանգական է։

Ան թէեւ ծանր հիւանդութիւն մը՝ բայց բուժելի է։

Ֆրանկախտի զոհերը միլիոնաւոր են եւ իրենց հիւանդութիւնը անդրադարձումներուն թիւը շատ մեծ է։ Զանազանուած եւ չխնամուած սիֆիլիսէն աւելի վտանգաւոր բան չկայ, ընդհակառակը, ժամանակին կատարուած զննական եւ խիստ դարմանում մը, կը փրկէ հիւանդը եւ կ'արգիլէ որ սիֆիլիսը բոլոր ուրիշներուն, բլլա՛յ ցեղին համար սպառնալիք մը ըլլայ։

Այսպէս ամէն ֆրանկախտաւոր, իր երկրին, իր ընտանիքին եւ իր իսկ շահուն համար պէտք է ուշադիր խնամել տալ ինքզինքը երկար տարիներ, բժշկական խիստ հակակշռի տակ, որպէսզի ֆրանկախտը կրնայ մրափել երկար ատեն եւ ուժգնօրէն արթննալ՝ պատճառելով սոսկալի հետեւանքներ։

Ֆրանկախտը, անհատին, ցեղին եւ հայրենիքին այս ահարկու վտանգը, պիտի անհետանար, եթէ բոլոր ֆրանկախտաւորները իրենք զիրենք խնամել տային։

Ուրեմն, իւրաքանչիւր ֆրանկախտաւորի պարտականութիւնն է ենթարկուիլ դարմանումի եւ բժշկական հակակշռի։

(Շարունակելի)

## ՇԱԲԹՈՒԱՆ ՄԱՀԵՐԸ

Տ. ԱՐՍԷՆ Ծ. ՎՐԴ. ՎԵՀՈՒՆԻ.— Անդամ Կրօն. Ժողովոյ եւ Քարոզիչ Պէշիկթաշ-Օրթագիւղի համայնքի ի տէր ննջեց 10 Դեկտ. Ազգ. Հիւանդանոցին մէջ։ Օծման կարգը եւ յուղարկաւորութիւնը տեղի ունեցաւ 12 Դեկտ. Բշ. Բերայի Ս. Երրորդութեան եկեղեցւոյն մէջ։ Մարմինը ամփոփուեցաւ Շիշլիի Ազգ. Գերեզմանատունը։

ԱՅՐԻ ՏԻԿ. ԱՏՐԻՆԷ ՊԱՅԵԱՆ. Յուղարկաւորութիւնը տեղի ունեցաւ Ուր. 16 Դեկտ, Գատը Գիւղ Ս. Լեւոն եկեղեցին։

ՕՐ. ԱՐՏԵՄԻՍ ՄՈՒՐԱՏԵԱՆ. Յուղարկաւորութիւնը տեղի ունեցաւ Ուր. 16 Դեկտ. Ֆէրիգիւղի եկեղեցին եւ մարմինը ամփոփուեցաւ Շիշլիի Ազգ. գերեզմանատունը։

ՊԵՏՐՈՍ ՄՈՒՐԱՏԵԱՆ. Յուղարկաւորութիւնը կատարուեցաւ Կիր. 11 Դեկտ. Գատըգիւղ Ս. Թադէոս եկեղեցին։ Մարմինը ամփոփուեցաւ գիւղին Ազգ. գերեզմանատունը։

ՍԱՐԳԻՍ ՆԱՐԻՆԵԱՆ. Յուղարկաւորութիւնը տեղի ունեցաւ Կիր. 11 Դեկտ. Սկիւտարի Ս. Խաչ եկեղեցին։ Մարմինը ամփոփուեցաւ տեղւոյս գերեզմանատունը։

ՅՈՎՀ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ. Բանկալթի Պէշիկթաշի եկեղեցիին։ Յուղարկաւորութիւնը կատարուեցաւ Կիր. 11 Դեկտ. մարմինը ամփոփուեցաւ Շիշլիի գերեզմանատունը։

ԳԱՌՆԻԿ ԵՐԷՑԵԱՆ. Գործարանատէր կահագործ.— Յուղար. տեղի ունեցաւ 16 Ուր. Բերայի Ս. Երրորդ. եկեղեցին։ Մարմինը ամփոփուեցաւ Շիշլիի Ազգ. գերեզմանատունը։

ՇԱՄԻԵԼԱ ՇԱՄՏԱՆՃԵԱՆ (Այրի տիկին) Յուղարկ. Եշ. 15 Դեկտ. Գնալըի եկեղեցին։

## ԾԱԽՈՒ ՏՈՒՆ

Եէշիլ քէօյ, Մզկիթին դէմ 44 թիւ տունը ծախու է։ Ունի 7 սենեակ, ելեկտր. լոյս, բաղնիք, անուշ ջուր եւ ուրեշ յարմարութիւններ։ Ընդարձակ պարտէզ պտղատու ծառերով։ Ամէնը 1000 կանգուն գետնի վրայ։

Դիմել Փալագաշեան Գրատունը։ Բերա, Գապրիստան Փողոց, Թիւ 171

## ԻՆՔՆԱՇԱՐԺԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԷՐԵՐ ԵՒ ՎԱՐԻՉՆԵՐ

Կ'ուզէ՞ք լաւ վիճակի մէջ պահել ձեր մօթօրը եւ ձեր պենզինի սպառումին վրայ 20 o/o խնայողութիւն մը ունենալ, գործածեցէք Միքսթրօլ (Mixtrol)։ Պէնզինին մէջ լեցուելով, գլաններու ձիգ մասերը սահուն կ'ընէ, կը ջնջէ բընածուխի կազմութիւնը եւ կ'աւելցնէ արագութիւնը։



Բրիտանական Պատերազմի եւ Օդագնացութեան Նախարարութիւններուն մէջ կը գործածուի չկատարեալ յաջողութեամբ։ Փորձելն ընդունիլ է։

Տուփը (պէնզինի 8 պիտոնի համար) կ'արժէ միայն մէկ Թուրք ոսկի։ Կը ծախուի գլխաւոր կառատուններու եւ ինքնաշարժի պիտոյքներու վաճառատուններուն մէջ։

Պոլքաններու համար Ընդհ. գործակալն է Վիլֆրիտ տը Սէն, Սէն Բիէռ խան, Ղալաթիա։

Փոքրաքանակ կը ծախուին՝ Ամերիկեան Կառաժ, նաեւ Բերա, Մեծ փողոց, Մօրիս Մօթօրս վաճառատունը։ Թաքսիմի համար մթերանոց՝ Սըրա Սէլվի, թիւ 6։ Ղալաթիա, Մէրմէրճիլէր, թիւ 165։

## „SENTRY"
## ԱՆԳԼԻԱԿԱՆ ԴՐԱՄԱՐԿՂ
70 Թրքական ոսկիի



"SENTRY"

Ձեր թղթադրամները, գոհարեղէնները եւ դրամը ձեր տան մէջ պահեցէք, առանց այրուելէ կամ գողցուելէ վախնալու։

Թուրքիոյ համար միակ ներկայացուցիչ՝ Վիլֆրէտ տը Սէն, Սէն Բիէռ խան, Ղալաթիա։

Կը վաճառուին՝

Բերա. Թաքսիմ, Սրրա Սէլվի, Թիւ 9։
» Մեծ փողոց, «Էքլէռ» Սինէմային դէմ, Ժօրժ Աթանասիատէս։
Ղալաթիա, Մահմուտիէ փողոց, Միչել Ձէլիչ Որդիք։